«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - Նյութերի գեղարվեստական մշակումը <<Տեխնոլոգիա>> առարկայի դասընթացում

ԱՌԱՐԿԱ Տեխնոլոգիա 9/18

ՀԵՂԻՆԱԿ Պողոսյան Մերի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Ծովագյուղի Մուրացանի անվան միջն. դպրոց>> ՊՈԱԿ

Բովանդակություն

1. Ներածություն - - 3-4

2. Փորագրարվեստը դեկորատիվ կիրառական արվեստ - -5-8

3. Էստամպը որպես փորագրության առանձնատիպ- -9-10

4 .Ճապոնական էստամպները 17-19-րդ դարերում- -11-12

5. Փայտի գեղարվեստական փորագրության տեսակները- -13-15

6. Դասի պլանավորում- -16-18

7. Եզրակացություն- -19

8. Գրականություն- -20

Ներածություն

Տեխնոլոգիա առարկայի դասընթացում { 5 – 7-րդ դասարաններ} իր ուրույն տեղն է զբաղեցնում <<Նյութերի գեղարվեստական մշակում>> թեման:Մարդն ստեղծել է առարկաներ և դրանք օգտագործել է իր նպատակին հասնելու համար:Սակայն ժամանակի ընթացքում չի բավարարվել միայն արտադրանքի՝ իր իսկ ստեղծած առարկայի ֆունկցիոնալ արժեքով, բացի հարմարությանն ու օգտակարությանը, ուշադրությանն է արժանացրել նաև գեղագիտական արժեքին:Արտադրանքի արտաքին տեսքի գեղեցկությունն ու միջավայրի գեղեցկացմանը մարդիկ ձգտել են դեռևս հին ժամանակներից: Այդ նպատակով իրերը զարդարում էին զարդանկարներով ու նախշերով: Դրանք գնահատվում էին ոչ միայ ֆունկցիոնալության համար, այլև արտաքին տեսքի զարդարման ու գեղագիտական նուրբ աշխատանքի համար:

5 – 7-րդ դասարանների ուսումնական դասընթացներում ուսուցանվում է դեկորատիվ կիրառական արվեստի մասին: Կախված արտադրանքի նյութից և մշակման տեխնոլոգիայից՝ գոյություն ունեն դեկորատիվ կիրառական արվեստի բազմաթիվ տեսակներ: Արդի դարաշրջանում սրանք նույնպես ունեն իրենց ուրույն տեղը, (մետաղադրվագում, փայտափորագրություն, նկարազարդում տարբեր նյութերի վրա, ասեղնագործություն, դարբնագործություն և այլն), որոնք իրենց մեջ ներառում են բազմաթիվ տեխնոլոգիաներ, որոնց ուսուցման ու փոքր- ինչ աշխատանքին տիրապետման **նպատակն է**, որպեսզի սովորողն ունենա՝

ա) ընդհանուր տեղեկություններ ժողովրդական արհեստների ու նշանակության մասին

բ) Ժողովրդական արհեստներում գեղեցիկի ու գործառնականի մասին

գ) ծանոթանա արտադրանքի գեղարվեստական ձևավորման տեսակներին, և դեկորատիվ ներկմանն ու երանգավորմանը

դ) ծանոթ լինի փորագրության տեսակներին, դրանց կիրառությանն ու նշանակությանը

ե) գաղափար ունենա մետաղների դրվագման և նրա տեսակների, դրվագման տեխնոլոգիական գործընթացներում կիրառվող գործիքների ու հարմարանքների ու հարմարանքների մասին:

Հիմնական խնդիրներն են սովորողների մոտ՝

ա) զարգացնել համագործակցային դասերը պլանավորելու ու կազմակերպելու հմտություններ

բ) կատարելագործել աշխատանքային ուսուցման մեթոդների կիրառական հմտությունները

գ) բարձրացնել ուսուցման ու ուսումնառության որակը

դ) ուսումնասիրել տարբեր երկրների արհեստների տեսակները, կատարել համեմատություններ, և կարողանալ ստեղծել նորն ու լավագույնը

Թեման արդիական է, քանի որ նորարարությունը դարձել էմեր կյանքի ռիթմի անբաժան մասը: Մարդը միշտ էլ ձգտել է նորին ու գեղեցիկին, որոնել ու գտել ակնահաճոն ու շքեղը: Տեխնոլոգիայի զարգացման այս բուռն ժամանակաշրջանում դա ավելի ակնհայտ է դարձել, որ ամեն ոք ձգտում է գեղեցիկի մեջ դրսևորել սեփական յուրահատուկ ոճը:

Նյութերի գեղարվեստական մշակման շնորհիվ է,որ մեր շրջապատում ապահովվում է ինտերիերի և էքստերիերի դիզայնը:

Փորագրարվեստը դեկորատիվ կիրառական արվեստ

Համաշխարհային դեկորատիվ-կիրառական արվեստի գանձարանում իրենց ներդրումներն ունեն հայ վարպետները: Գորգերը , ժանյակները, ասեղնագործ կտորներեղենը,տարազի տարատեսակները,խեցեղենը,փայտի գեղարվեստական մշակումը վկայում են արվեստի այդ ճյուղի հնագույն ավանդները:

Հայաստանի հանրապետությունում դեկորատիվ արվեստը շարունակում է նորովի զարգանալ ազգային ավանդույթների հենքի վրա:այդ ոլորտի հայ վարպետներն զբաղվում են ապակու տարատեսակների (հախճապակի, ճենապակի) գեղարվեստական մշակմամբ, արծաթագործությամբ, ոսկերչությամբ,մետաղագործությամբ, փայտագործությամբ, խեցեգործությամբ և այլն:

Փորագրարվեստը ծագումով կապված է այն արհեստների հետ որոնցում կիրառվում է փորագրարվեստը՝ քանդակագործություն, քանդակազարդում, ոսկերչություն և այլն:

Փայտի մշակման կուլտուրան սերտորեն կապված է ժողովուրդների կենցաղին, նրա ապրելակերպին, արհեստավորական բազմաթիվ ճյուղերին, կիրառական արվեստի տարբեր բնագավառներին: Սակայն տարբեր երկրներում փայտի մշակման արվեստը ձևավորվել է տարբեր ժամանակներում:

Հայաստանում փայտի վրա գեղանկարչական աշխատանքներ կատարելն ընդունված է եղել շատ հնուց: Այս մասին են վկայում Մովսես Խորենացու, Ագաթանգեղոսի թողած բազմաթիվ վկայությունները:

Փայտի փորագրարվեստի մասին Չինաստանում հիշատակվում են 6-ից 7-րդ դարերը: Առաջին փայտափորագրությունները Եվրոպայում ստեղծվել են 14 – 15 –րդ դարերի սահմանագծում: 17 –ից 18 – րդ դարերում ծաղկում է ապրում ճապոնական փայտափորագրությունը, որը կապված էր Հիսիկավա Մորոնոբուի, Կիտագավա Ուտամարոյի, Տյոսուսայ Սյառակուի, 19 – րդ դարի 1 – ին կեսին Կացյուսիկա Հոկուսայի և այլոց անունների հետ:

Փորագրությունը գրաֆիկական արվեստներին տվեց բնորոշ արտահայտչամիջոցներ և կիրառվեց գրաֆիկական նպատակներով՝ գրքերի, և այլ տպագիր հրատակությունների պատկերազարդումներ, թռուցիկներ, էստամպներ ստեղծելու համար: Փայտի գեղարվեստական փորագրությունն ամենատարածված և ժողովրդի կողմից սիրված աշխատանքներից մեկն է, որով մարդիք վաղուց զարդարում էին տները, կահույքը, աշխատանքի գործիքները և այլն: Մեր օրերում նույնպես

փայտի գեղարվեստական փորագրությունը մնում է ժողովրդական վարպետների, ինչպես նաև արհեստավոր – նկարիչների սիրված աշխատանքներից մեկը: Հայաստանի ճանաչված ժողովրդական վարպետներից է Սահակ Սահակյանը: Նա մասնակցել է ինքնագործունեության արվեստին նվիրված հանրապետական միութենական համաշխարհային բազմաթիվ ցուցահանդեսների, արժանացել ոսկե, արծաթե, բրոնզե մեդալների ու պատվոգրերի: Սահակյանի աշխատանքները աչքի են ընկնում մեծ ու փոքր չափերի , շքեղ նախշազարդերի, հստակ ռիթմի, թեթև ու սահուն ուրվագծերի ներդաշնակությամբ: Վարպետի հանրաճանաչ աշխատանքները պահպանվում են Հայաստանի ժողովրդական արվեստի թանգարանում, Սանկտ Պետերբուրգում, և այլ երկրներում: Ստորև ներկայացված են նրա աշխատանքներից.

Էստամպը որպես փորագրության առանձնատիպ

Էստամպը տպագիր գրաֆիկայի հաստոցային ստեղծագործություն է, որը նկարչի կողմից արված փորագրության, վիմագրության, մենատիպի առանձնատիպ է:

Ա. Մենատիպը տպագիր գրաֆիկայի տեսակ է, որի տպանմուշը ստանալու համար բացարձակ հարթ կաղապարի մակարեսին ձեռքով անց են կացնում ներկերը՝ հաստոցի վրա հերթականությամբ տպելու համար: Նման աշխատանքներին բնորոշ են նուրբ գունահարաբերումները, մեղմ ու սահուն ուրվագծերը և արտաքնապես ջրաներկ նկարներ են հիշեցնում: Մենատիպերը հայտնի են 17 – րդ դարից սկսած, սակայն լայն տարածում են գտել 19 – ի վեջին և հատկապես 20 – րդ դարում:

Չնայած էստամպի ստեղծման զանազան մեթոդներին, սրանք բաժանվում են 4 հիմնական տեսակի.

1. Բարձրակարգ – հիմնականում կատառվում է ծառի պլոկված որևէ կեղևի վրա:
2. Աշխատանքը կատարվում մետաղյա թիթեղի կամ պողպատի թիթեղի վրա (օֆորտ)
3. Տափակ աշխատանքը կատարվում է տարբեր միյավայրերում , և հաստոցի օգնությամբ
4. Կաղապարային – աշխատանքը կատարվում է միայն կաղապարների միջոցով

Բ. Փորագրությունը գրաֆիկայի տեսակ է, որը ներառում է փորագրության բազմազան միջոցներով փորագրության համար նյութ ծառայող իրերի մշակումը, և դրանցից փորագրանկարներ ստանալը: Փորագրությունը օգտվում է գրաֆիկային ներհատուկ գեղարվեստական միջոցներից և կիրառվում գրաֆիկային բնորոշ նպատակներով՝ գրքերի և այլ տպագիր հրատարակությունների պատկերազարդումներ, հաստոցային թերթեր (էստամպներ), թռուցիկներ ստեղծելու համար: Փորագրության օգնությամբ կարելի է մեծ թվով նույնարժեք տպածոներ ստանալ:Տարբերակվում են խորը և ուռուցիկ փորագրություն:

Ուռուցիկ փորագրությունում տախտակի գծանկարից ազատ բոլոր մասերը խորացվում են 2 – 5մմ:Այսպիսով գծանկարը դառնում է բարձր՝կազմելով հարթ մակերեսով ռելիեֆ, որի վրա ներկը քսվում է սպունգով կամ ներկագլանակով, ապա ձեռքով կամ մամլիչով հավասարաչափ սեղմվում է թուղթը, որի վրա արտատպում է տախտակին եղած պատկերը: Նման

եղանակով էստամպներ պատրաստելուն են ծառայում փայտափորագրությունը և լինոփորագրությունը:

Խորը փորագրության մեջ գծանկարը կամ քիմիական միջոցներով խորացվում է պղնձից, ցինկից, լատունից կամ պողպատից թիթեղի վրա: Այս ամենից պատրաստ լինելուց հետո ներկը համաչափ լցվում է խորացված տեղերը և խոնավ թղթով ծածկված << տախտակը>> մամլելով անցկացվում է տպագրական հաստոցի գլանների միջով: Խորը փորագրության տարատեսակներ են հատիչափորագրությունը, օֆորտը, աքվատինտան:

Օֆորտի վարպետներից են Ալբրեխտ դյուրերը, Ֆրանցիսկո Գոյան, Սալվադոր Դալին:Հայ կերպարվեստում առաջին օֆորտներն ստեղծել է Շամշինյանը 19-րդ դարի վերջին:Հայ և համաշխարհային օֆորտի վարպետներից է Էդգար Շահինը:

Օֆորտը մետաղի վրա փորագրության տեսակ է, երբ խորացված, փորված տարրերը ստեղծվում են թթուներով մետաղը խածատելու միջոցով: Ինչպես ուռուցիկ, այնպես էլ խորը փորագրությունը կարող է լինել գունավոր: Ներկը քսվում է նույն տախտակիտարբեր մասերին, կամ էլ յուրաքանչյուր գույն քսվում է միայն այդ գույնի համար նախատեսված մեկ այլ տախտակի համապատասխան մասին: Իսկ պատկերն ստացվում է մեկ թերթի վրա բոլոր տախտակների տպումից:

Գ. Վիմագրությունը այլ անունով՝ լիտոգրաֆիան, տպագրության եղանակ է, որի համար որպես տպաձև ծառայում է քարի ողորկ կամ հատիկավոր մակերեսը:Քարի վրա պատկերը գծանկարվում է յուղոտ տուշով՝ վրձնի կամ գրչածայրի օգնությամբ, կամ էլ վիմագրական մատիտով (յուղոտ մատիտ):Այս ամենից հետո հարթ կաղապարի վրա հաջորդաբար ջուր և ներկ են քսում և թուղթը դնելով վրան սկսում ճնշում գործադրել, որի արդյունքում տպաձևից անմիջականորեն թղթին է փոխադրվում պատկերը:Ստորև ներկայացված են վիմագրության օրինակներ.

Հավուց թառ, 1081 թ. Havuts Tar, AD 1081

Տաթև, 1295 թ. Tatev monastery, AD 1295

Ճապոնական էստամպները 17–19-րդ դարերում

Չինաստանում և Ճապոնիայում սկսած 6-7-րդ դարերից, զբաղվել են փորագրությամբ և ապա փորագրանկարների արտատպումով: Հեռավորարևելքի արվեստներից հատկապես ճապոնական էստամպները ամենամատչելիներից և անմիջապես գնահատանքի արժանացնողներից են: Ճապոնական արվեստի այս տեսակը, ինչպես արևելքում, այնպես էլ արևմուտքում մեծ հաջողություն ունեցավ իր հայտնության հենց առաջին օրից:

Ճապոնացի վարպետը շատ բարակ թղթի վրա սևով և սպիտակով մի համառոտ էսքիզ է անում և այն ամրացնում վայրի բալենու լավ չորացրած մի տախտակի վրա ևապա սկսում այն հարթեցնել տախտակի թելիկների ուղղությամբ: Փորագրողը կտրվածքներ է անում գծերի շուրջ՝ դրանց բարձրաքանդակների տեսք հաղորդում: Իսկ տպագրողը ստացված քանդակի մակերեսից բարձր գտնվող մասերի վրա լցնում է թանաքը և նախապես խոնավացրած թուղթը խնամքով իջեցնում տախտակին: Սա արվում է սև և սպիտակ նկարների համար:Իսկ ահա գունավոր տպագրության ժամանակ տպագրողը պետք է այնքան հմուտ լինի , որ կարողանա գույները պահի իրենց օրիգինալ տոներով, անգույն վայրերում միաձևություն ստանա, նվազեցնի երանգները,սպունգով թեթև ճնշում գործադրի նկարի վրա:Այս ամենը չի կարող իրականացվել առանց խորացված գիտելիքների և մասնագիտական մեծ ճկունության:

Վարպետի, տպագրողի,փորագրողի գործողությունների կազմակերպողը համարվում է հրատարակողը,ով շատ հաճախ կարող էր լինել պարզապես առևտրական: Ոչ ոք չգիտի նաև այն, թե ինչն էր ազդում վարպետների, փորագրողների և տպագրողների միջև:Ոչ ոք չգիտի նաև այն, թե ինչն էր ազդում վարպետների վրա էստամպների գույներն ընտրելիս: Այս է վկայում, որ գտնվել են մի քանի էստամպներ, որոնց բովանդակությունը և ամսաթիվը նույնն է, սակայն գույներն են տարբեր: Իսկ այն, արդյոք արտադրանքի վերջնական որոշումը վարպետի, տպագրիչի և փորագրիչի ընդհանուր որոշումն է, թե միայն վերջին երկուսինը. Մնում է չբացահայտված:

Կյանքի և գաղափարների զարգացմանը զուգընթաց այս արվեստում ևս, ճյուղավորումներ եղան, որոնք կապված են քմահաճույքների և քաղաքային նորաձևության հետ: Ձևավորվեցին առանձին դպրոցներ,որոնք ստեղծում եին յուրօրինակ էստամպներ:

Դռանք առևտրական մրցակցությունում տեխնիկական բնույթ էին կրում:

Լիտոգրաֆիայիցանցում կատարվեց դեպի լինոգրաֆիա,որի արաջացրած էֆեկտըավելի տպավորիչ էր, իսկ գոյները տալիս էին զարմացնող արդյունքներ:

Ճապոնական քանդակագործների մեծամասնությունը Ուկիո դպրոցի սաներն էին: Ուկիո բառը թարգմանվել է <<Ծփացող աշխարհի նկարներ>> : 1680

ականներին բռն ավելի կոնկրետ իմաստ է ձեռք բերում <<Ծփացող աշխարհ>> և դառնում նոր ոճ; Այն վերցնում է մի իմաստ,որը նշանակում է կյանք:Նկարներում ներկայացվում է կյանքը մի ակնթարթում,առանց հաջորդ օրվա հոգսի:Ճապոնական մայրաքաղաք էդոյում ապրող ազնվականները իրենց համար ստեղծեցին քաղաքին մոտ մի փոքրիկ հարմարավետ վայր իրենց հանգիստը կազմակերպելու համար: Այստեղ ընկերներով խմում էին, անմիտ հաճույքներ , պիկնիկներ կամ պոետիկական երեկոներ էին կազմակերպվում: Իսկ արվեստագործները սա օգտագործում էին իրենց ստեղծագործությունների համար: Ինչ կատարվում էր էդոյում, անմիջապես էստամպների մի կույտ էր հանվում վաճառքի, որպես հուշանվեր, թանկարժեք տան զրդարանքի պարագաներ, որոնք մնում էին հաճույքներով լի երեկույթից հետո:

Իր ծագումից սկսած բնապատկերները գերակշռող դեր են կատարել արևելյան նկարչության մեջ:Բնապատկերը հերոսական և առասպելական անհատները,թռչունները և ծաղիկները , պայքարող սումոները ներշնչել են ճապոնացի արոեստագետներին: Եթե փորագրությունը ներկայացնելով մերթ տեղագրական, մերթ երևակայական բնապատկեր, գտնվում էր Ուկիոյի պատմության մեջ, ապա միայն 19-րդ դարում է, որ բնապատկերը դարձավ ներշնչման գլխավոր աղբյուրը: Հոկուսայի և Հիրոսիգեի ու նրանց աշակերտների հետ միայն բնապատկերի արվեստը վերահաստատվեց:

Այս շրջանում արվեստագետները բազմզթիվ պատվերներ ունեցան մետաքսի կամ կատարյալ թղթի վրա նկարելու:Սա հնարավորություն տվեցին արվեստագետին ստեղծագործելու և այս աշխատանքներն էլ հետագայում հնարավորություն տվեցին ուսումնասիրել առանձին արվեստագետներին բնորոշ ոճը:Ճապոնական գրեթե բոլոր էստամպները պատճենահանվել են հետագա դարերում, սակայն ճապոնական փորագրանկարները իրենցից ներկայացնում են մի բնագավառ , որտեղ կոլեկցիոներները համեստ գումարով դեռևս կարող են ձեռգ բերել ավելի շուտ օրիգինալ օրիգինալ տարբերակները, քան արտատպությունները :Իհարկե գոյություհ ունեն հասարակական մեծ Հավաքաուներ Ճապոնիայում <Մեծ բրիտանիայում: հատկապես ԱՄՆ-ում,մեծ Բրիտանիայում:Շատ հաճախ թանգարանն մեծ հավաքացուններ չեն տեղադրտան ոչ շրջանակի , ոլ ել հարմարեցվված տեղադրումներ են կատարում , դրանց հարստությունը պատշաճ կերպով ցուցադրելու և դրանք մանրամասն ուսումնասիրեիը համար:Գրեթե բոլոր հավաքածուներում էլ կա կպչուն ցանկություն նախապես ավելի, խորը շոշափել այս կախարդական աշխարհը, որտեղ առայժմ բավականին ուսումնասիրություններ կան կատարելու:

Փայտի գեղարվեստական փորագրության տեսակները

Հարթակոսային փորագրություն - փորագրության այս եղանակը բնորոշ է նրանով,որ զարդանկարի տարրերը ստացվում են առարկայի հարթ մակերևույթին փորվող տարբեր ձևերի ու չափերի ակոսիկների միջոցով: Զարդանկարի վերին կետերը մնում են առարկայի մակերևույթի մակարդակին:

Հարթակոսային փորագրությունը կախված փոսիկների ձևից և զարդանկարի բնույթից լինում են երկրաչափական և եզրագծային: Երկրաչափական փորագրությունը փայտի փորագրության ամենահին եղանակներից մեկն է, որը ստացվում է երկրաչափական ձև ունեցող տարրերի միջոցով:



Եզրագծային փորագրությունը բնորոշ է նկարի ողջ եզրագծերով անցնող ոչ խորը և բարակ երկնիստ փոսիկներով: Ի տարբերություն երկրաչափական փորագրության , եզրագծայինի մեջ օգտագործում են պատկերազարդման մոտիվներ՝ տերևների, խաղիկների, թռչունների ու կենդանիների պատկերների տեսքով: Եզրագծային փորագրությամբ ստացված պատկերը նման է գծանկարի:

Երկրաչափական փորագրություն –իրենից ներկայացնում է երկրաչափական պատկերների տեսքով զարդաքանդակներ: պատկերների բազմազանության շնորհիվ առարկային տալիս է գեղեցիկ տեսք:Երկրաչափական փորագրության

հիմնական տարրերն են. Երկնիստ փորվածք, եռանիստ փորվածք,քառանիստ փորվածք և կորագիծ փորվածք:

Ցանցկեն փորագրություն – փորագրության այս եղանակը ամենապարզն է: Այն կատարում են հիմնականում նրբասղոցով՝ սղոցելով զանազան պատկերների եզրագծերը:Ցանցկեն փորագրության դետալները օգտագործում են այնտեղ, որտեղ դրանց բացվածքներից պետք է ինչ – որ բան տեսնել, օրինակ դռների, առաջակալների, պատուհանների առաջակալների վրա և այլն: Դրանցում բացակայում է ֆոնը կամ այսպես ասած հետին պլանը, որի փոխարեն հաճախ օգտագործում են վառ երանգի կտորներ:

Ռելիեֆային, ոչ հարթ զարդանկարով ցանցկեն փորագրությունը կոչվում է աժուր: Այսպիսի փորագրությամբ զարդարում են բարոկկո և ռոկոկո ոճերով պատրաստված կահույքը:Եթե ցանցկեն փորագրությունը ամրացվում է փայտե հիմքի վրա, ապա նրան անվանում են վրադիր:

Ռելիեֆային և ծավալային փորագրություն – տարբերվում են ռելիեֆային փորագրության հետևյալ եղանակները.

-Հարթռելիեֆային, որի դեպքում խորացվում է զարդանկարի ֆոնը, իսկ նկարի տարրերը կառուցվում են հավասար բարձրություն ունեցող ռելիեֆների տեսքով:

-Ռելիեֆային, որի խորացված ֆոնի վրա զարդանկարի տարրերը ձևավորվում են տարբեր բարձրության ռելիեֆների տեսքով:

Տարբերում են նաև ռելիեֆային փորագրության երկու տեսակներ՝ ցածրաքանդակ ,,բարելիեֆ,, , որն ունիռելիեֆի ոչ մեծ բարձրություն, և բարձրաքանդակ ,,գորելիեֆ,, , որի ռելիեֆն ունի ավելի մեծ բարձրություն և ավելի արտահայտիչ լուսաստվեր:

Ներկայումս ռելիեֆային փորագրությունը օգտագործում են կահույքների գեղարվեստական ձևավորման, ինչպես նաև հասարակական շենքերի ինտերիերների ձևավորման համար:

Ծավալային փորագրությունը առանձնահատուկ է նրանով, որ ստեղծվող ողջ կերպարը ռելիեֆային է և մասնակիորեն կամ լրիվ առանձնացվում է ֆոնից՝ վերածվելով ծավալային քանդակի:

Փորագրման աշխատանքները պետք է կատարել չոր և լուսավոր սենյակում՝ նորմալ ջերմաստիճանի և խոնավության պայմաններում: Աշխատատեղի կահավորանքը կախված է կատարվող աշխատանքի բնույթից: Փոքր չափերի շինվածքների (զարդատուփ, գդալ, խաղալիքներ) մշակման ժամանակ փորագրությունը կարելի է կատարելսովորական սեղանի վրա՝ աթոռին նստած: Մեծ շինվածքների (կահույքի տարրեր, քանդակներ) մշակումը կատարում են այդ նպատակի համար հարմարեցված դազգահների վրա: Ձեռքով փորագրություն կատարելու համար օգտագործում են բազմազան կտրող

գործիքներ, հիմնականում հետևյալ դուրերը՝ հարթ ոիղիղ, հարթ շեղ, ճոռաձև և կեռաձև:

ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

5 – րդ դասարան

Դասի թեման - Նյութերի գեղարվեստական մշակում:

Նկարազարդում, նկարազարդում նախշակաղապարով

Թեմայի նպատակը -ունենան ընդհանուր տեղեկություններ ժողովրդական արհեստների, ժողովրդական արհեստներում գեղեցիկի ու գործառնականի մասին

-ծանոթանալ արտադրանքի գեղարվեստական ձևավորման տեսակներին

-վեր հանել միջառարկայական կապերը

-մեծացնել սովորողների մտահորիզոնը

-զարգացնել գիտելիքը գործնականում կիրառելու համար

Թեմայի խնդիրներն են- աշակերտը պետք է.

-ծանոթանա արտադրանքի դեկորատիվ ներկմանն ու երանգավորմանը

-ճանաչի դեկորատիվ կիրառական արվեստի տեսակները

-կարողանա կատարել դեկորատիվ աշխատանքներ

-ամրապնդի գիտելիքները գործնական աշխատանքների միջոցով

Անհրաժեշտ նյութեր ու պարագաներ- գունավոր ներկեր, փայտյա նախապատրաստվածք,վրձին, ջուր, թուղթ և նախշակաղապար կամ ձևանմուշ:

Դասի ընթացքը

1. Կազմակերպչական մաս
2. Անցած նյութի հիշեցում՝ արտադրանքի գեղագիտական և ֆունկցիոնալ արժեքները և դեկորատիվ կիրառական արվեստի տեսակները
3. Մտագրոհ



Տարբերեցին դեկորատիվ ներկման երկու եղանակները՝ նկարազարդում ձեռքով և նկարազարդում նախշակաղապարով:

4.Իմաստի ընկալում

Աշակերտներին բաժանվում է ուսուցչի կողմից նախորոք պատրաստած նախշակաղապարներ, յուրաքնչյուր աշակերտին մեկ հատ:

Գործնական աշխատանք - փայտե նախապատրաստվածքի վրա կատարել նկարազարդում նախշակաղապարի միջոցով:

Աշխատանքի ընթացքում կատարվում է ընթացիկ հրահանգավորումներ

5.Կշռադատում – ուսուցիչը հավաքում է բոլոր աշխատանքները և ցուցադրում ներկայացնելով թերություններն ու անճշտությունները: Ինչու կատարվեց այս աշխատանքը և որտեղ կարելի է կիրառել:

6.Աշակերտների գնահատում

7. 3 բան սովորեցի

2 բան հետաքրքրեց

1 բան անհասկանալի մնաց -ելքի քարտերի միջոցով դասի ավարտին հավաքագրվում են սովորողների պատասխանները,որոնց վրա էլ հիմնվելով կառուցվում է նոր դասը(նկարազարդում նկարի փոխադրումով), որպեսզի առանձնացվի և անդրադառնա չյուրացված հասկացություններին ու գաղափարներին:

Վերջնարդյունք –իմանա ներկերի տեսակների ,կիրառելիության և հատկությունների մասին

- Տիրապետի տարբեր նյութերով գեղարվեստական մշակման տեխնոլոգիաներին
- Կկարևորի միջառարկայական կապերը
- Իմանա արտադրանքի ֆունկցիոնալ և գեղագիտական արժեքի մասին
- Աշխատանքի ընթացքում կարողանա պահպանել անվտանգության կանոնները

Եզրակացություն

Արվեստագետների մեծ տաղանդը,նրանց անկրկնելի , նրանց անկրկնելի ստեղծագործական անհատականությունները և արվեստը, քաղաքակրթության բարձր մակարդակի հասցնելու համար կատարած եռանդուն աշխատանքը, ունեցավ այն արդյունքը, որ նրանք շարունակելով գեղարվեստական գործերը զարգացրեցին ու կատարելագործեցին գեղարվեստական մշակույթը:

Նյութերի գեղարվեստական մշակումը ոչ միայն արհեստ է, այլ նաև արվեստ որը սերտորեն կապված է նկարչության գրականության և ինչու-չէ նաև բնագիտական առարկաների հետ:Այս թեման սովորողներին հնարավորություն է ընձեռնում ընտրել և օգտագործել համապատասխան նյութեր, և ստեղծել կոմպոզիցիաներ սեփական նախաձեռնությամբ:

Գեղագիտական դաստիարակությունը բոլորից շատ իրականացվում է տեխնոլոգիայի նյութերի գեղարվեստական մշակման թեմաների դասընթացներում:

Գեղագիտական դաստիարակության կարևորագույն և մշտական աղբյուրը արվեստի աշխարհն է:

Գրականություն

Հայկական սովետական հանրագիտարան հատորներ՝ 4; 7;12 Երևան – 1986

Մանյա Ղազարյան՝ <<Փայտի գեղարվեստական փորագրությունը Հայաստանում>>

Մարիամ Այվազյան՝ <<Սահակ Սահակյան>>

Սողոմոնյան՝ <<Տեխնոլոգիա>> 2009